նաւուն չուանաց՝ սարսափ կ'ազդէին, տարերց պա-
տերազմի միջոց։ Կլեց ծովը օտարաց բոլոր նաւերը-
այլ Հայոցը՝ յորում էր պատկեր Երանուհւոյ Կու-
սին, թէպէտ երկար միջոց պատերազմեցաւ մրրկին
և ալեաց դէմ, և մեծապէս վտանգուած, առա-
գաստքն պատառ պատառ, մեծ կայմն միջաբեկ,
յիրաւի հրաշքով, յաջողութեամբ հասաւ 'ի ցա-
մաք։ Մեծ վտանգէն ազատած ՝ներմեռանդն պաշ-
տօնարկուք հրաշագործ պատկերի Տիրամօրն, կրցան
ազատ շունչ առնուլ. և չնորհակալ լինելով նորա
գթալիր բարեխօսութեան առաջի Աստուծոյ, հրա-
շազերծ գանձովն անցան գնացին 'ի Մակեդոնիա։
Հոն՝ ըստ ազդելոյ Տիրամօր, ապահով և յարմար
տեղ մի պատրաստեցին սրբազան պատկերին, ին-
քեանք միշտ երկրպագուք և գոհաբանիչք լինելով,
զգուշութեամբ պահելով իրենց գանձը, գիշեր ցո-
րեկ պաշտելով Երկնից Թագուհին։ Երկար ժա-
մանակ մնացին նոքա 'ի Մակեդոնիա, ընդ պաշտ-
պանութեամբ Տիրամօր։ Շուտով տարածուեցաւ Մա-
կեդոնիոյ մէջ Ս. Պատկերին հրաշագործութեանց
համբաւն. բազմութիւն ժողովրդոց՝ 'ի զանազան
պէտս՝ ՝ներմ աղօթիւք կը դիմէին առ նա. և նա՝
Պաշտպանն յուսացելոց, ինչպէս մինչև ցայսօր,
կու տար ցոյց իւր առատ ողորմութեան, և աղա-
չաւորք մխիթարեալ կը մեկնէին նորա խորանէն։
Տասը տարիէն վերջը՝ ազդեցութիւն եղաւ ՝ներմե-
ռանդն պաշտօնասիրաց Տիրամօր պատկերին՝ տա-
նել զնա յԻլվով։ Որովհետև հոն արդէն տարա-
ծուած էր համբաւ հրաշից Պատկերին, այն պատ-
ճառաւ մեծ հանդիսիւ, 'ի ցոյցս ՝ներմ հաւատոց
ընդունեցան Իլվովցիք զՊատկեր Կուսին, ինչպէս
'ի Մակեդոնիա, և անպակաս էին երկրպագուք